



Pravda

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տարի հաւոր 1 կոպէկ արծաթ: Եայտարարութիւնները տպվում են չայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսիարէն, Գերմաներէն եւ ֆուրբերէն:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Այդ ազգը, կրօնով նեղատրական, կոչվում էր
Հուլո, մի ցեղ հին Ասորինից, որը, օգուտ քա-
ղելով իրականաց լեռների դժուար մատակի դրու-
թիւնը, ժամանակի խորին հնուժիւնից, պահպա-
նում էին իրեանց անկախութիւնը: Նորանց կա-

Անհատութիւնը մարդիս մէջ պայմանա-
ւորւում է մարդի կազմվածքով, բնութեանից

Մէ/իքդադէ :

առաջացած նորա ներքին յատկութիւններով, ընդունակութիւններով, հակումներով, և զարգանումէ թէ ընտանեկան դաստիարակութեան, թէ հասարակական կրթութեան միջոցով:

Նահապետական դրութեան մէջ մարդը իր անհատութեան ճիշդ ինքնաձանաչութեանը դեռ չէ հասնում...: Ինչքան որ նա զարգանում է, կրթվում է, նա աւելի ու աւելի է գնահատում իր համայնքները, իր հաւատը, իր նկատման անկասկածիւնը, իր հասարակական պարտաւորութիւնները և իրաւունքները:

×

Այդ պատճառով մարդկային պատմութեան ընթացքը կարող է կոչվել մարդիկ անհատութեան զարգացման պատմութիւն:

Եթէ այդ կ'ըստնայ մեր համայնքները, եթէ մենք մեր գաղափարը պիտի համարենք անդադար, միշտ և ամեն տեղ ձգտել անհատութեան զարգանալուն, — այն ժամանակ անողորմ կերպով պիտի պատերազմենք այն ոյժերի հետ, որոնք մեզ զոհում են անհատութիւնը:

Բոլոր այն դրութիւնները որոնք իրանց կ'այտնեն անհատութեան դէմ, մենք պիտի մեր և մարդիկ պատմական, ազատ և բնական ընթացքի թշնամի համարենք...

Ինչպէս հասարակութիւնը կազմված է անձերից, այնպէս էլ մարդկութիւնը կազմված է ազգութիւններից: Ամեն ազգութիւն իր այլ և այլ անհատական յատկութիւններ և առանձնութիւններն ունի, որոնց թւում և այն ազգութեանը պատկանող մայրենի լեզուն պիտի հաշվի:

Եթէ պահպանել մարդիկ անհատութիւնը նշանակում է հասարակութեանը օգուտ բերել, նորան հարստացնել, նորա համար նոր ոյժ մշակել, — ուրեմն և պահպանել ազգութիւններն անհատական յատկութիւններն և նշանակում է օգուտ բերել ամբողջ մարդկութեանը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՒՍԻՒՑ

Յանկանում եմ ձեզ ծանօթացնել քանի մի նախնական մեր Նուխույ քաղաքի և նորա գաւառի գերօրէնց դրութիւններն, տեղւոյ ընակչաց դրութիւններն և սովորութիւններն հետ:

Այս քաղաքը բաղկացած է կովկասում միւս քաղաքների հետ, թէ և փոքր կատիկ, բայց կընդունաւ արդիւնաբերութեան արդիւնների առատութիւնը իւր շրջանի մէջ շատ մեծ տարբերութեամբ կը որոշուի իւր նմաններիցը, քիչ օգուտ, որ ըստ մեծի մասին օտարները կ'աշխատեն: Նուխին գտնվում է Ուստալայի երկրի շրջանային կողման, յիշած Գաղի անուն տարի Հարաւային կողման ստորոտումը, բնակութեանը Հիւսիսային արեւելեան և մասամբ ինչ արեւմտեան կողմանը շրջապատուած են բարձրաւանդակ սարեր. կանաչադարձ ծառատաններով. իսկ Հարաւային կողմն ընդարձակ որ տանում է դէպի իւր վիճակի զիւղորայքը, օդը մաքուր է և առօրէյաբար, ջուրը նմանապէս, բայց երբեմն երբեմն սաստիկ անձրև պատահած ժամանակն կ'աղտորէ, պատճառն որ Հայոց միկ թաղի աղբիւրների ալն մէկն է, որի հետ խառնվում է հեղեղների ջուրը, որից և բաժանվում են բոլոր աղբիւրները, այդ էլ չէ շարունակվում մինչև երեք օր: Գաղաքի մէջը բոլորը բաղիւր են խաղողի, ուրիշ զանազան պտղատու տունների, թիօնաղարի չերամաղորման, և մեծ մասամբ թիօնի ծառեր՝ որը Հայ բնակիչների տարեկան գլխաւոր արդիւնքը կասուի: Հայերը բաղկացած են երկու թաղից, ընդամենը են չորս հարիւր տուն, իսկ թուրքերը քսան մասամբ կարելի է աւելիասել: Հայերը ունեն երկու եկեղեցի, իւրաքանչիւր թաղին մէկը, առաջին թաղի անունը տալում է «Քեօհնայէն» որ իսկ Նուխի նորան կարելի է ասել, որոյ եկեղեցւոյ մէջ կայ այժմ երեք ծխական քահանաներ, կից որոյ է տեղւոյս Յաջորդաբար և Հոգեւոր կառավարութիւնը չինւած եկեղեցական զուգարով. երկրորդ թաղի անունը թուրքերէն բառով «Նիկիթեան» այսինքն նորա-

չէն գիւղ. կից միւսին, այն պատճառաւ է ասվում «Նիկիթեան» որ այս թաղի բնակիչներն ըստ իւր գաւառի և ուրիշ տեղերի բնակիչներիցն են եկած ու բնակութիւն դրած. ունի մէկ նորայէն գմբէթաւոր եկեղեցի, վերելահոս լճակը առաջին իւր մեծատարած այգւովը լիքը թիօնի ծառերով, որից միայն կարելի է տարեկան օգուտ լինի եկեղեցւոյն մինչև հարկեր յիստէն մանէթ, մերձ որոյ է և Հայոց Հոգեւոր ուսումնարանը: Այս թաղը թէ և նոր է բնակութիւն առած, բայց կարելի է լաւ ասել միւսից, պատճառն որ, փողոցները ընդարձակ են, հարթ, և մաքուր, որ բնակիչների առողջութեան մեծ մասը պահպանողն է: Նորան և անուր չինութեան մեծ մասը այս տեղ է, եթէ միւս թաղւոր չինութեան համար տալիս սաժէր ծախուի տան ուրիշ, այս տեղ պիտի քանուկ ծախուի, պատճառն որ, քաղաքի չինութեան լուստորութեան մեծ մասը այս տեղ է և օրըստօրէ էլ կընտարուի նորանոր նորան և չինութիւններով, ուղղացներով փողոցները, կարգաւոր դասերով, այն թաղումն է պ. Միքայիլի առաջին: Արեւմտից ապրուշտով գործարանի ամենաբարձր չինութիւններն մօտի նորան են պ. Միքայիլի «Նիկի կամբանի» անուն մեծատարած բաղը իւր միջի եղած չինութիւններիցն և զանազան խմիչ-քիչներն գործարաններով: Գաղաքի Հայոց երկու թաղի միջի բաժանարար սահմանն է «Կօհն» անուն առուն, որի ջուրը սաստիկ անձրևի ժամանակը հեղան կըտանայ. մինչև անդամ ձիւր և տաւարներ կ'առնի. և իւր մշտական տեղը կ'իջնէ հեռու մինչև հինգ վեց սաժէն, շատ դուրսների ապրանքներ կ'առնի: Եթէ անձրևը գիւլերուան ժամանակը պատահի, կ'առնուի ժամանակահատիկ միջի երկու երկու ամիսներ քարերը կը տալան, ջուր չի ճարուի որ հոլայի. քաղաքի արեւմտեան կողմն է «Ղուրդուլի» աստուծ գետը, որը սաստիկ անձրևի ժամանակը մէկ օր անկաւ զնայներ կ'առնի մօտի բնակութեան անձրևին և բաղիւրն. ընդ հակառակը ամիսներով ժամանակ կը պատահի որ ջուր չի լինի:

Մայիսի 27-ին

Գ. Յ. Մախանեանց

ՆԱՄԱԿ ԶԱՔԱՍԱԼԻՑ

Ղարաբաղու խանութիւնը բաղկացած է յետագայ դաւաճանից. Ղարաբաղ (Արցախ), Զանգազուր (Սիւնիք), Զիքաբերդու, Զաւառու ու Մուստաֆա խանութի: Առաջին երեք դաւաճանի բնակչաց համարեն 1/4 մասը հայք են, իսկ 3/4 թուրքեր: Մուստաֆա խանութի ու Զաւառու բնակիչները, թուրքեր են: Կան ուրիշ հասարակութիւններ էլ թուրքերից որոնք անվանվում են յօշոդ (թաւառական) սորա են Տիւրքաբաղ, Թաքալ, Գաւառտան և այլն: Թաւառաղ ժողովուրդականը չունին մշտնջենական բնակարաններ, ձմեռն Կուր և Երաւսի գետերի ափերումն են ձգում իրանց վրանները (օրաներն), իսկ ամառը Ղարաբաղ և Զանգազուրի եայրաւորներում: Զաւառու, Մուստաֆա խանութի և թաւառաղ հասարակութեանց անտեսական մասին միայն կարող եմ ասել, որ նոքա պարագայում են երկրագործութեամբ և խոշորաւորութեամբ, այդ և հետո չեն աւազակութիւնից մասնաւոր Տիւրքաբաղները: Զաւառու ու Մուստաֆա խանութի դաւաճանը փոքր տեղ են ըլլում: Նաժ Ղարաբաղում, իսկ միայնակ երեք դաւառները անգլին ընդարձակութիւն են բռնած: Գաւառաղու նահանգի մէջ սկսեալ Տաթևու լեռներից մինչ ցիւր ու Երաւսի գետերը:

Այդ երեք դաւառները թէ անտեսական և թէ մտաւորական դրութիւնը բաւականին տարբեր են միմեանցից, խօսակցութեան և սովորութեանը մէջ նմանապէս մեծ զանազանութիւն կայ: Ամեն մի դաւառը ունի իրա առանձին սովորութիւնը և լեզու: Զանգազուրի մէջ կանայք անբաժան ընկերներ են իրանց արանց, նոքա (կանայք) ամառ ժամանակը թաղում են խուրցերը, ցորենի, կըտվահատի, կորեկի և դարիի ու խտակ հատիկները անում են հորեր: Կանայք միմիայն հովվութիւն չեն անում իրանց արանց պէս, իսկ միայնակ ընդ զուր գործերում օգնական են նորանց: Զանգազուրի բնակիչը խօսում են բոլորովին տարբեր Ղարաբաղու բնակիչներից, այս մերձները գործ են անում. հար, մար, քիցալայ, կուրկուտ, բուժբուժը, չըլալ և այլն. իսկ զանգազուրից ասում են, հեր, մար, քիցալայ, կարկուտ, ձալար, ջիւլալ և այլն:

Ինչպէս վերն յիշեցի, Ղարաբաղու բնակիչը տարբեր են սովորութեամբ և տնտեսականութեամբ Զանգազուրի բնակիչներից: Զանգազուրում տարբեր հորերի մէջ:

Վարաճիւն է որ 14 տարեկան տղային պատկուտ են մի 20 տարեկան տղայի հետ, նպատակն այն է, որ նորա հարսն անտեսական գործերի մէջ օգտակար լինի իւր ամուսնոյ: Պէտք է ասել, որ այն տեղի կանայք իրանց երեւելի միշտ ծածկած են պահում. ասում են, որ մի տղա պատկուտայն տեղ և մնայով նորանորի հետ, վեց ամսից յետոյ միայն կարողացել է անանի նորա երեսը և գալով իւր մօր մօտ դանդաղել է ասելով ինչու նորա համար չիտտ աղիկ է ընտրել: Զանգազուրի ընտանիքները պարագայում են հողագործութեամբ և խոշորաւորութեամբ, համարեն թէ այդերանութիւն բոլորովին չի կայ: Անտեղ կան մի քանի պղնձեա հանքեր, որոնք բանում են բաւականին աղոյ:

Ղարաբաղու բնակիչները պարագայում են, հողագործութեամբ, չերամաղորմութեամբ, այդեպանութեամբ և խոշորաւորութեամբ: խոշորաւորութեամբ չի տարածուած Ղարաբաղու հայ ժողովուրդականաց մէջ, այս պատիւ թուրքերը միայն ունին խոշորներ, բայց Զանգազուրի բնակչած մեծ մասը պարագայում է նորանով. իսկ չերամաղորմութեամբ ասելի տարածուած է Ղարաբաղում, մանաւանդ Տիւրքաբաղ, Կորմերում, Զանգազուրի քանակիչը չունեն և մի փոքր հասկացողութիւն այդ անտեսականութեան մէջ: Տիւրքաղու գաւառակի ժողովուրդը մի տալը թաղի առաջ ամենաաղքատ ժողովուրդն էր բոլոր նահանգի մէջ, բայց այժմ նոքա ամենահարուստ հասարակութիւն են դարձել, ըստ որում իրանց առանձին ուղղութիւնը դարձրել են չերամաղորմութեան վերայ, որից մեծ օգուտ են ստանում:

Ղարաբաղու հողը ընդունակ է շատ տեսակ բերմունքի. ձարտարու ցորենը, Ամարասու գինին, Գաւառու բրինձը ամենաբերմունքն են բոլոր դաւառում: Միւսն դաւառից առատութեամբ տնտեսում են բամբակ. Գանի տարի առաջ Շուշեցի պ. Համբարձում Հախումեանը փորձ փորձեց ցանել Ղարաբաղու գաւառի Բիլլանաբար անվանալ դաւառի մէջ օտօրն (машина) և ինչ էլ կարծում, պարտին ի զուր գործ հողարաւոր մանկիւններն ունայն չանցան. այժմ ցանածը հնում է. մեծ քանակութեամբ տարեկան օտօրն է ստանում պ. Հախումեանը, իւրաքանչիւր օր բանում են այն տեղ շատ կանայք, երեխաներ, և մարդիկ ընտրելով փորած հողից օտօրն: Շրջակայ գիւղորայքի աղքատ բնակչաց համար մեծ նեցուկ է պ. Հախումեանը. երանի թէ նորա օրինակին հետեւին շատ մարդիկ Ղարաբաղու հարուստ տները:

Չիքաբերդու բնակչաց համար միայն կարող եմ ասել, որ նորա սովորութիւնը բնակիչներն են, պարագայում են հողագործութեամբ, այդեպանութեամբ և քիչ չերամաղորմութեամբ: Այդեպանութիւնը մի աւելի օգուտ չի բերում նորանց:

Ա. Մէլիք-Փաչայեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Գոխտօր Արքեպիսկոպոս Ստեփան Կրաւէրը Ամէրիկայ գնալու: Նորան առաջարկվում է այնտեղ քիմիայի պրոֆէսորի տեղը նշանաւոր ուժեղով: Մի կողմից վախճանում են խոշոր երիտասարդին թողնել այդ գիւղեցիկ ասպարէզը ու գալ այստեղ աղիտութիւնից հալածված բռնադատված լինելու համար, իսկ միւս կողմից չենք կարող չլինել նորան, որ մենք անհամբերութեամբ սպասում ենք ճշմարիտ գիտցող և աշխատող մարդիկների. բաւական խեղդված է եղել լոյսը, միտքը, գիտութիւնը մի կողմից, ինքնահաւան տգէտ, բռնաւոր ծնողներ իւր, միւս կողմ մից դարդակալութիւն, քաւար փշոյ և քարոյական սարքներից: Մի կողմը հրէշաւոր տղիտութեան ծիծաղելի ինքնահաւանութիւն, — միւս կողմ անընդունակութեան սև և կեղտոտ նախանձ. . . բայց դարձեալ զուր պէտք է դա՞նք — որ կուէք: Եթէ ոչ, եթէ ձեզ այն մարդիկ չգան, — լաւ է որ նոքա, որոնք այստեղ զփաղաղաբար ընկել են, որ նոքա էլ փախան: Թող փախչի այն ժամանակ այն ամեն մարդը, որի կուրծքը մէջ զեռ բարակութեան մարդկային սիրտը, որը իր նպատակ է դրել ձգակ աշխատել, ուսումնասիրել, պատրաստվել, և ոչ թէ նախանձել, ծնել, բռնադատել, հալածել, սպանել:

Վերին Ագուլիսից գրած մի նամակից տեղեկանում ենք, որ նոյն տեղի երկու սեռից ուսումնարանների հողաբարձութեան ցանկանում են, հասարակութեան կամքով ուսումնարանները համար ստորադրված նուէրները հաւաքել և արանով ուսումնարանի ապագան, այդ դուժար, առեւտրական բանը: ձգելով:

Խոշորագործիւնը «Երաւսի» անունը տալով, զօրտօր Գրիգոր Գուշաբեանցի բնօրէնը, 1906

палевін середняго уха у новорожд. и груди. дѣтей» որը գրված էր բժշկականութեան և խրոնոլոգիայի գիտօրի աստիճանը ստանալու համար: — Գրվածքը չափազանց մասնաւոր լինելով, չէ տալիս մեզ իրաւունք ըննադատական հայեացք չլինել, որ դիսքրտացիալ պաշտպանութեան ժամանակ Մոսկիայի համալսարանի պրոֆէսորներից յայտնված միտքը պ. Գուշաբեանցի աշխատանքի մասին ապացուցանում է որ նա մի նոր քալ է բժշկականութեան այդ ճիւղի մէջ, որը ամենաառաջացած դիմանական բժշկականութեանը անգամ ստիպված կ'լինի ճանաչել և խօսաւորվանել:

Ռուսաստանի զանազան դաւաճանից հաղորդած տեղեկութիւններից երեսուէ, որ այս տարի հայերը եթէ շատ աղքատ չեն, շատ վատ էլ չեն, բայց խօսող գրեթէ ամեն տեղ տարբերութեան պատճառով այրված է:

Ի վէլ քաղաքի բնակիչները հաւաքեցին 2000 ուրիշ հիմնական դրամագումար, որ Պետրոս մեծի յիշատակը հիմնեն քաղաքում մի բնակական ուսումնարան:

Մեզ դրում են Զաքարիայից, որ մայիսի 30-ին այստեղի օրիորդներն արքունի ուսումնարանը նահապական կառավարիչ պ. Շուկիւրիի հետ աշխատանքով նորոգվեցաւ: Ռուսաստանը կար և առաջ, բայց զանազան պատճառներով փակած էր: Այժմ օրիորդների թիւը 16 է, որոնցից 10 հայ են և 6 ռուս: Առ այժմ աւանդելի աւարկանիւրը սորա են. կրօն, ռուսաց և հայոց լեզու, և ձեռագործ:

Նոյն մասնաւոր նամակից տեղեկանում ենք, որ Զաքարիայի մէջ 2 վաճառականներ դիտաւորութիւն ունեն մտաբքի կօօններից մեքենաներով թեւ քաշել Եւրօպացոյ ձեռով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆ ՓԱՅՈՒՆ ՈՍԿԻ ԶԷ

Ոչ մի տեղ ազգային գաղափարը չունեցաւ այնքան զօրեղ, համարձակ կուսակցներ, ոչ մի տեղ բազմութիւնը այնքան չէր համարում և մասնակցում իր հայրենիքը օտարների լուծից ազատելու շարժման մէջ, որքան Խոյալայում: Ոչ մի տեղ այդ ժողովուրդը այնպէս միաձայն չէր ձգտում ազգի զանազան մասերը միացնելու որքան Խոյալայում: Փառաւոր անունները ինչպէս Մաճահին, Գարիբալդի Խոյալայիցների սրտերում անջնջելի կերպով դրօշմվեցան: Գարիբալդին, օրինակ, ներկայացնում է իր անձամբ մարդկային պատմութեան մէջ վաղուց չ'տեսած ժողովուրդական հերոսի պատկերը...

×

Սնեղայ տարվայ սկզբումը իտալական տէրութիւնը գցեց իր ձեռքը Հոսօ քաղաքը, որը մինչև այդ ժամանակ պատկանում էր պապին, ինչպէս աշխարհական իշխանին: Այդ կերպով Խոյալայի միութիւնը այժմ իրաւոր զօրձեցաւ: Ո՛ր չ'գիտէ ինչ միջոցներով նա իրաւորվել է: Բայց այդ գործի մէջ կայ ուրիշ տեղի հետաքրքիր կողմը: Արեւոք որքան շահվեցաւ իտալական ազգը իր այդ միութեանց:

×

Բնենք այն բոլոր արգելքները, որոնց պատահել է իտալական ազգը միանալու ընթացքում: Արգելքները սօքա էին. Ալբորտիան, Խոյալայի մանր տէրութիւնները և Պապը: Ազգային գաղափարի կուսակցը ժողովուրդն էր, որի կարգում առաջին զեռ նուորներից մինը Գարիբալդին էր: Այժմ ձգտումն այնքան զօրեղ էր, մանաւանդ հիւսիսային Խոյալայում, որ Խոյալայի փոքր տէրութիւններից մինը, Հիւրադանալով ընդհանալ նորան, առաւել լաւ համարեց իր

Եւ անաշխորդել շարժմանը, նորա հետեւանք-
ներէն: օգուտ քաղելու համար:

Վիկտոր Էմանուէլի հաշիւը ճիշդ յայ-
տնվեցաւ: Նա իր համար նպատակ էր դրել
փոքր պետութեան թագաւորի դրութեանը
հասնել ամբողջ Խաղաղութեան թագաւորի նը-
շանակութեանը: Հետեւելով իր անձնական
հասկերին և օգուտներին, նա իր թէ հըս-
կումէր ժողովրդական գործի մասին, ձգտե-
լով Խաղաղութեան արտաքին միութեանը:
Ժողովուրդի բազմութեան վերանորո-
գութեանը, երկրի հարստութեանը, հար-
կերի թեթեւութեանը, լուծարութեան տա-
րածումը, այլ պայմաններէն բացեր էին, որոնց
մասին նորա տէրութեանը մինչև այդ ժա-
մանակը չէր էլ հոգում:

Վիկտոր Էմանուէլը զգոյշ մարդ լինե-
լով՝ սկսելով կռիւ Ավստրիայի միապետու-
թեան հետ, և չ'իսկանալով միջոց տալ ազ-
գային յեղափոխութեանը ընդարձակվելու,
նախապատմեց Զրանսիայի օգնութիւն խնդ-
րել պատերազմը սկսելու համար: Նապո-
լէոն օգնեց, մի ամիս չ'տևեց պատերազմը
և Ավստրիան յաղթվեցաւ, Խաղաղութեան մի-
մասը, որը Ավստրիային էր պատկանում յետ
դարձվեցաւ Խաղաղութեան: Բայց իտալական
տէրութիւնը պիտի վարձատրէր իր ոչ ան-
շահասէր դաշնակցին մարդի մօով և հայ-
րենիքի հօդի մի մասով: Թափային Միջոց
քաղաքը և լեռնային Սալոնիկ դաւաճող
Զրանսիային անցան: Գարիբալդին ազգի
անունով բողոքեց այդ անօրէն վարմունքի
դէմ, որ ընդէմէր ազգային միութեան դա-
շափարին:

Մի և նոյն կերպով վարվում էր տէրու-
թիւնը և Խաղաղութեան մանր պետութիւնների
վերաբերութեամբ: Ինքն վճռողական քայլ
երբէք չէր անում: Նա թոյլէր տալիս ժո-
ղովրդական հերոսին Գարիբալդին սկսել
ամեն գործ: Եթէ մի որ և է տէրութիւն
ոչնչացնելու փորձը այդ վերջինին աջակցում էր
այն ժամանակ Վիկտոր Էմանուէլի տե-
րութիւնը իսկոյն իր ձեռքն էր դրում նվա-
ճած երկիրը և միացնում էր նորան իր թա-
գաւորութեան հետ, — եթէ ոչ, այն ժամա-
նակ տէրութիւնը ցոյց էր տալիս որ Գա-
րիբալդին չէ համակրում, համարում է նո-
րան ապստամբող, բռնութէր նորան և աք-
սորում էր նորան Կապրէրա կղզին, որտեղ
նորա վերա հսկում էին զինւորական քանի
մի նաւեր: Բայց երբ հարկաւոր էր դա-
ձեալ որ և է դորձ սկսել, Գարիբալդին
միշտ աջակցում էր առանց արգելքի փակել
իր բանդարիութիւնից, կազմել զորք և նո-
րից պատերազմել սկսել:

Միամիտ Խաղաղութեանը կարծում էին, որ
տէրութիւնը այդ կատակերգութիւնը խա-
ղաղով հոգում էր նոցա մասին:

Վերջապէս բոլոր պետութիւններից
մնաց միայն Հռոմի պապի պետութիւնը:
Նորա հետ կաշկռելով իտալական տէրութիւնը
ցոյց տուեց իրան կատարելապէս 1862 թ.
Գարիբալդին վճռելով Կապրէրա կղզին
երկուսէ Խաղաղութեան մէջ: Նա ճանապար-
հորդում է Խաղաղութեան պահպան մասերում,
տէրութեանը յայտնի է, որ նա հրապար-
կապէս հաւաքում է կամաւոր զինւորական-
ներին, որ գնաց նուաճել Հռոմ և այդպէս
աւարտի Խաղաղութեան գործը:

Խաղաղական տէրութիւնը այս բոլորը տես-
նում է և զաղանի ուրախութեամբ սպասում է
աջողութեանը: Բայց յանկարծ պապի պաշտ-
պան Նապոլէոնը սկսում է բողոքել: Խաղա-
ղութեանը դիտարկութեան դէմ Պապի եր-
կիրները իրանց սեպհականացնելու: Եւ տե-

րութիւնը, դարձեալ վախենալով ժողովրդա-
կան ընդարձակ շարժումից, իսկոյն ուղար-
կում է Գարիբալդին դէմ իր զօրքը: Օգոս-
տոսի 29-ին Ապրիլի 20-ին իտալական
զօրքը պատահում է Գարիբալդին զօրքին,
և չ'նայելով որ Գարիբալդին արգելում է իր
զինուորականներին հրացանները գցել, զըն-
դապետ Պապիին յարձակվում է իր զօր-
քով նորա վերայ, Գարիբալդին վերադա-
րձում է և գերի է բռնվում:

Սոյն ժամանակ միայն ժողովուրդը սկսեց
հասկանալ իր սխալը, թէ նա այդպէս կու-
րօքն հաւատում էր այն տէրութեանը, որ
վտանգի բոլորում դաւաճանում էր ազգային
գրոշակին: Նա անէի էլ սկսեց հասկանալ
իր սխալը, երբ բարօրութեան տեղը տեսաւ
որ օրէցօր աճում են հարկերը ալեւորի վերա,
ծխախոտի վերա և այլն և այլն, որ անդա-
դար նոր պետական փոխառութիւններ են
կապվում, որոնց համար պահանջվում են
բարձր տոկոսների վճարելը, իսկ այդ տեսակ
պարտաւորութիւնը կատարելու համար հար-
կաւոր էր դարձնալ մեծացնել հարկեր: Բացի
սորանից ժողովուրդը համոզվեցաւ որ տե-
րութեան պաշտօնականները զողանում են և
վտանգում են ազգի փողերը:

Հռոմի վերջինը Պրուսաց, Վերսայիների
և Կոստանայի թիւանթիւների որոշումների
ժամանակ — անցաւ համարեա թէ անկատելի
ձեռք և չ'յարուցեց առաջուկ պէս օգնու-
թիւն: Ժողովուրդը վտանգած զլը ում էր
իր սխալը մէջ, որ փոխանակ իր ազգային վի-
րականութեան գործը ինքը չ'սկսէր դէմօրհա-
տելի առաջնորդութեամբ, ընդհակառակը
օգնութիւն խնդրեց արխիտոկրատաւ — բուր-
ժուական (ազնուական դրամաւոր դասից)
հասարակութիւնից և կառավարութիւնից:
Բայց արդէն ուշ էր:

Համարեա բոլոր երկիրը պատկանում է
արխիտոկրատներին: Հող չ'ունեցող ժողո-
վուրդը բողոքում էր նրանից և կախված: Ազ-
նուականների կալվածները հարստահարվում
են միայն մի քանի հարուստ կապալառու-
ներից, մնացած հողը պատկանում է քիչ
թուով վաճառականութեամբ և կապալառու-
թեամբ հարստացած սեպհականատերերին:
Իսկ մնացած ամբողջ ժողովուրդը բնակ-
վում է կամ գիւղերում, կամ քաղաքներում,
այսինքն վարձելով բնակարաններ մի կամ
երկու սենեակով՝ մի փոքրիկ կոտոր ցանքա-
տեղով, մի սարայի, կամ մի կղզեկաւ խրո-
ւիթի պէս բան, առանց մեքէէ, և չ'հաշ-
վելով փայտեա նստարանները, սեղանները,
կամ չոր տախտերը անկողնու փոխարէն: Զա-
տակը քարիցն է շինած կամ քոտ մեծի մասին
սե գետին է: Ամեն տեղ սկիւր երկաթներ և
բօրիկ ոտներով կանայք:

Ժողովրդական կրթութիւնը մի և նոյն
դրութեան մէջն է մեծ գիւղերում:

Ժողովրդական ուսումնարանի միակ վար-
ժապետը ստանում է 500 ֆրանկ (125 մ)
տարէն, այն ևս հիւսիսային գաւառներում,
որտեղ ուսուցիչ աւելի է տարածված քան
միւս տեղերը, և որտեղ ժողովուրդը բաւա-
կանին հարուստ է:

Ահա Խաղաղութեան վերջինը, որ վերականգ-
նվեցաւ այն մարդկանց ձեռքով, որոնք աւե-
լի իրանց վերայ էին մտածում:

ՆԱՄԱԿ ՍՏՐԱՍՏՈՒՐԳԻՑ

Այս տարուայ ամեն տեղ կրկնող հեղինակները
Հռոմի պապի դէմ զօրքով շարժում են: Մի
գարիբալդի տեսարան ներկայանում է ճանապար-
հորդի աչքին, երբ նա հասնում է այս տեղերը:
Ինչոք մի քանի շարժառէլ գրիթ է հասած ցո-
րկնով զարդարած արտեր էին, այժմ ջրի մի ան-
սահման մակերեսով է ներկայացնում: Ողորմելի
Աղաւթիցը, որոնք հաղիւ աղատուել են մի տարի
առաջ կղած արեւմտեղ պատերազմից բերած վը-

նասներէց, անհ կրկին դո՛ւ են դառնում մի նոր
ցաւի, որ բայց այն, որ պիտի թանկացնի այս տա-
րածայն հայրենիքը և ուրեմն բոլոր ապրումները,
պատճառ. կը դառնայ դանդաղ հիւսնողութիւն-
ների, որոնք անշուշտ յաւաքանում են ամեն ան-
գամ, երբ ջուրը տարածվում է երկրի վերայ և եր-
կիրը քայքայելով տափակ լինելով, ջրին անհասնել
է հոսել դէպի իր սկզբնական տեղը, դէպի գետի
փոքր: Զուրը մտաւն է դաշտերի վերայ և անտառ-
ների մէջ և թէ իր հետ բերած սատակած ձըկ-
ների մարմիններով, թէ փտացնելով խոտը և ծա-
ռերը, սպախանում է, օղը իր անառողջ գոլորշիներ-
ով: Մի քանի գետերը յատկութիւն ունին իրանց
ջրերը տարածելով ցամաքի վերայ, հողը առաւել
պտղաբեր դարձնել, որ երկի թէ կախումն ունի
ջրի մէջ լուցած անօրգանական նիւթերի հետ,
որոնք և դաշտերի արտաբնական պարարտութեան
մէջ զլխաւոր դեր են խաղում: Բայց Հռոմի
ջուրը բնաւ այս օգտակէտ յատկութիւն չ'ունի. ինչ-
պէս որ ընդհանրապէս յայտնի է Աղաւթի բնա-
կաններէն:

Բայց և ուրիշ մի առիթ կայ, որ վտանգնում է
այստեղեցիներին: Զմեռը թէպէտ շատ բարեխառն
էր այս տարի, բայց մի օր ճերմութիւնը մինչև 20
սանտիման զրօյց ցած ընկնելով, սառցոյցը որթերի
մեծ մասը, այնպէս որ այս տարու զինքն ոչ միայն
փոքր կը լինի քանակութեամբ այլ և վատ և ու-
րեմն պիտի արժան գնով ծախվի:

Նախ քան տեսած լինէի այս գաւառները, լը-
սած էի որ Աղաւթիցը շատ դժգոհ են իրանց
այժմեան դրութեամբ, որ հողով մնացել են նոցա
Զրանսիայի և մի առանձին տաղութիւն են ցոյց
տալիս Գերմանացիների դէմ: Բայց ինքս չը կա-
րողացայ համոզվել թէ այս լսած իրողութիւնը
ճիշդ է: Յիշատի է, որ այստեղայից (Սարապոլո-
ցից) օտարական մարդ տեսնելով, աշխատում են
միշտ ֆրանսերէն խօսել նորա հետ, բայց իրարու
հետ խօսելով, նոցա երբէք այլ լեզու չ'են գոր-
ծածում: Բայց իրանց դաւաճական (ալլեմանա-
կան) լեզուն, որ այնպիսի անձուհի հնչում է, որ
մինչև անգամ Եւրոպայի լեզուն (որ յայտնի է
իր կոպիտ արտասանութեամբ) մինչև քաղցրա-
հնչելուն և ներդաշնակ է թուում դոքա հետ համե-
մատելով: Ընդհանրապէս նկատած է, որ ամենա-
մեծ տաղութիւնը լինում է մի ցեղի ամենամո-
տիկ ճիւղերի մէջ և այս իրողութիւնը կարելի է հեշ-
տութեամբ նկատել և այստեղ, ուշադիր լինելով բը-
նակներին և գերմանական զօրքի յարաբերութիւն-
ներին: Մինչ որ Աղաւթիցը բարեխառնական յա-
րաբերութիւններ են պահպանում Պրուսացիների
և Բաւարացիների հետ, նոցա տաղութիւն Ալբերտ-
տեղերիցը: Եւ ամեն անգամ երբ այստեղ ժո-
ղովրդի և զօրքի մէջ անբաւականութիւններ են
ծաղում կամ վէճեր լինում, միշտ վտանգ կարելի
է լինել, որ այս զինուորները Վիւրտեմբերցիներ
են: Այս տեսակ անբաւականութիւնները գոգադ-
դապէս դեռ են երեւնի պատահում են, բայց մեծ
մասամբ դոքա համար ընդունում են կիրակի օրե-
րը: Ամբողջ շարժել հաղիւ թէ կարող է մարդ
որ և իցէ թշնամութիւն նշանակել յաղթանակի և
յաղթվածների մէջ, ամեն մարդ իր դործով է դա-
դած և մտածում է միայն իր գործի վերայ: Իսկ
կիրակի օրերը, երբ ամեն բնակիչները աղատ են
ամենօրեայ պարագիծները և իրանց պարտա-
ւորութիւն են համարում հանգստանալ շաբաթեայ
դարդերից և հոգսերից, զբօսնելու գնալով. և մա-
նաւանդ անպաւար խմել և ճաշից յետոյ հար-
լած լինել. . . . Համարեա զարհուրելի և դարձեալ
տեսարան է անցնել Սարապոլոցի փողոցով կի-
րակի օրը կէսօրից յետոյ: Զափազանց զգուշու-
թեամբ պէտք է անցնել հարթած խմբերի մօտով. —
այդ դրութեան մէջ Սարապոլոցի շատ կուսակե-
ր է դառնում և վայ այն մարդուն, որը ինչ և իցէ
կերպով դոքա ուշադրութիւնն է դրաւում: Անցեալ
կիրակի օրը մի ծանօթ ուշ երկկուսական տուն դա-
նալով, շատաւր պէտք է փակել մի փոքր և նեղ
փողոցի միջով, որովհետեւ աղաղակներ էր լսում
մօտեցող մի խմբից, յԱյժմ գալ հանդիպել մեզ մի
Գերմանացի՝ մենք նորան կը ցոյց տանք մենք ինչ
ենք կարծում նոցա վերայ: Նա սող չի պլնի
մեր ձեռքից, այս օրերին է պատահում յիշած
կիրակներ և վէճերը Վիւրտեմբերցիներ զինուոր-
ների հետ: Մեծ մասը կիւր պատճառում են Ալ-
գաւթիցը: Տեսնելով մի զինուորականին մենակ,
յարձակվում են, նորա վերայ և որ և իցէ չ'սկսի
պատճառել մի վէճ են բարձրացնում, որը երբեմն
այնքան է շարժանակում, որ դոքա միմեանց ծե-
ծել են սկսում: Որովհետեւ նոքա միշտ աշխատում
են մի առանձին մարդու վերայ յարձակվել և նա
իրան մենակ պաշտպանել չէ կարող, ստիպած է
լինում իր սուրը հանել և դոքա վերջը այն է, որ
երկու կողմի արեւն էլ մասամբ թափվում է, մինչև
որ հասնում է ոտով անուրիները կամ զինւորացի

զինուորները (patronille) և այս արեւմտեղ տեսա-
րանին վերջ են տալիս, մեղաւորներին բռնելով:
Բայց ինչպէս յիշած էի, այս զէպքերը յաճախ չ'են:
Կարելի է առաջ էլ միշտ պատահած են, որով-
հետեւ այս սէրը դէպի վէճը և կռիւը երեւում է Ալ-
գաւթիցու բնաւորութեանը յատուկ: Սորա համար
ապացոյց թող այն լինի, որ նոքա և իրար հետ
շատ անգամ (նամանապէս զլխաւորապէս կիրակի
օրերը) վէճի մէջ են ընկնում և ծնծվում:

Ինչ և իցէ այստեղայից փոքր առ փոքր ընդե-
լանում են Գերմանացիներին, նոցա հետ չուտ չուտ
հանդիպելով աղաղակում են նոցա դէմ ունեցած
նախապաշարմունքից ծագած ատելութիւնը, կամ
առաւել ուղիղ ասել, անհամակրութիւնը: Մինչ
որ մի տարի առաջ Սարապոլոցիցը գերմանա-
նական զօրքը անցնել տեսնելով, այնպէս էին ա-
նում իրր թէ նորան չ'են նկատում, կամ զինուո-
րական երաժշտութեան անցնելու ժամանակ իր
թէ նորան չ'են լսում. այժմ այս զէպքերում միշտ
հաւաքվում են փողոցների անկիւններում այս տե-
սարանը վայելելու և կամ երաժիշտների ետեից
են վազում, ինչպէս որ սուրբ է անել ամեն տեղ
ամեն ժողովուրդը:

Ուշադրութեան արժանի իրողութիւն է այն, որ
կանանց մեծ մասը, ոչ ստորին այլ միջին դասերի,
սե են հաճում լինել աղաղակի սուգի — որ այս-
տեղ Bandstrauer են անուանում — դորանով ու-
ղում են նոքա ցոյց տալ իրանց դժգոհութիւնը
նուաճողներ դէմ:

Թէպէտ կարելի չէ ասել, որ այստեղի ժողո-
վուրդը բոլորովին բնօրեացի է իր նոր դրու-
թեանը, բայց ընդհանրապէս չէ կարելի ասել, որ
դոքա թշնամական աչքով նայէին Գերմանացի-
ների վերայ: Նոքա քաջ հասկանում են, թէ կա-
սիրական տեղութիւնը շատ հողում է նոցա դրու-
թիւնը բարեխառնական համար, ոչ միայն նոյն
օրէնքը մտցնելով այստեղ, որ կայ Գերմանիայի
միւս ամեն գաւառներում, այլ և շատ հանգա-
մանքներում նոցա ուրիշ գերմանական երկիրե-
րին գերապատուելով և նախադասելով և շատ ար-
տօնութիւններ չ'որհնելով:

Առհասարակ պիտի ասել, որ զանազան լրա-
գիրների միջոցով տարածվեցան շատ սխալ կար-
ծիքներ Աղաւթի այժմեան դրութեան վերաբերու-
թեամբ: Այս ստու կամ սխալ տրեւերից մինը և այն
էր, իր թէ, համեմատելով հին ժամանակներին
կեանքի պահանջները սաստիկ թանկացել է: Բայց
այս տեղի պայմանները բաւ ճանաչող մարդիկ հա-
կատակն են վկայում, ասելով թէ կեանքի ծախքը
օճելով այժմ չէ զանազանվում առաջուկին:
Եթէ թանկութիւնը այս տարի պիտի զգալի լինի,
դոքա պատճառները Գերմանական նուաճմանից
անկախ են և իրանց սկիւրն ունեն այս տարուայ
հեղինակներից և կարկուտից յառաջ եկած վտանգի
մէջ:

Բաւականանալով այս անգամ այսքանով, կաշ-
խատեմ միւս անգամ խօսել ուրիշ հարցերի վե-
րայ, որոնք այժմ հետաքրքրում են քաղաքս և նշա-
նակութիւն ունեն ամբողջ գաւառի համար:

Անդրէաս Արծրունի
ՏԻՒՆՍՈՒԱ

Պ. Տիւրք խորամանկ մարդ է, և բացի
որոնցից չէ սիրում որոշը անորոշ վերա-
փոխել: Նա հասարակապետութեան նախա-
գահ է, և կ'իսկանար պահել իր տեղը, չը
նայելով, որ նա միշտ կուսակից էր Օրլէա-
նեան թագաւորական ցեղի, մասնաւորապէս,
իսկ ընդհանրապէս կուսակից միապետու-
թեան: Բայց այժմեան ժամանակին անկա-
րելի է ընդհանրապէս կուսակից լինել միա-
պետութեան, որովհետեւ ինքն միապետական
կուսակցութիւնը բաժանվում է մասերի վե-
րա, որոնցից մէկը Զրանսիայի գահի մի
կանդիդատին աչքի առաջն ունի միւսները
ուրիշին: Միանալ այդ փոքր կուսակցու-
թիւններից մինի հետ, նշանակում է զրգուել
իր դէմ բացի հասարակապետական կուսակ-
ցութիւնից և բոլոր մնացած կուսակցու-
թիւնները: Օրինակ յայտնել իրան օրլէա-
նական, նշանակում է թշնամանալ թէ հա-
սարակապետականների, թէ բօնապարտիստ-
ների, թէ չ'զինվածների (Շամբօր) հետ:
Իսկ մնալ հասարակապետական, նշանակում է
բացի այդ կուսակցութեանց շահել իր կողմի
և այն ամեն կուսակցութիւնները, որոնք

վախենում են աղմուկից և փոփոխությունից հասարակական ընդունված կարգ ու կանոնի մէջ: Բացի սորանից Տիէրը ֆիւլմը հասարակական, միջոց ունի նախագահ մընալու, ուրեմն իննը առաջին մարդ Ֆըրանսիական պետութեան մէջ, նամանաւոր որ կուսակցութիւնների մէջ եղած անորոշ յարաբերութիւնները թոյլ չեն տայ անգամ մի ուրիշին այդ տեղը բռնելու:

Այս օրերս Տիէրին ներկայացան աջ կողմի պատգամաւորները (միապետականները) և զանգատում էին, որ քանի մի գաւառներում տէրութիւնը այնքան թոյլ էր ներգործում որ միջոց տուեց ժողովրդին ծայրայեղ հասարակականականներին ընտրելու: Տիէրը աշխատում էր իրան արդարացին և այս անգամ անկեղծ խօստովանեց, որ վերջին ընտրութիւնների ժամանակ տէրութիւնը իրան չէր գործէր պահում: Խօսակցութիւնը շարունակվում էր քաղաքավարի կերպով և արժանի էր ազգի բարձր ներկայացուցիչների: Վերջապէս անցան խօսակցութեան զխաւոր առարկայի: Պատգամաւորները համոզում էին Տիէրին որ տէրութիւնը փոխի գործունէութեան եղանակը ներքին քաղաքականութեան վերաբերութեամբ, սյուրիքն համարելով հասարակականութիւնը կառավարութեան անուցու որ ձեւ, աշխատի զանազան օգնելների և միջոցների օգնութեամբ աստիճանաբար մշտնջիւն և հաստատու միապետութիւնը Ծրանսիայի մէջ: Տիէրից պահանջեցին վճարողական խօսք: Բայց Տիէրը գործնական մարդ լինելով, որը իր անձին փնտրել չէ կամենում, վճարողական չ'ըսեց միապետականների կողմը, որոնց կուսակցութիւնը դեռ ևս թոյլ է:

Այդ վերջինները Տիէրի վարմունքից վերաբերված քաղաքավարի կերպով ակնարկութիւն արեցին, որ եթէ նա իրան պարտաւորութիւն է համարում պաշտպանել հասարակականութիւնը, այն ժամանակ նա պիտի հրաժարվի յոյսից միապետականներից օգնութիւն սպասելու:

Պ. Տիէրը միշտ վարվում է համաձայն իր անձնական օգուտների: Նա չ'համարձակվեց երբեք վճարողական կերպով զահի վերա միապետականներից մէկին նստեցնելու, բայց մի և նոյն ժամանակ չէ համարձակվում հաստատու Ծրանսիայում և հասարակականութեան թիւերը, թէ և նա միշտ հաւատացնում է, արտասուքներ աչքերին, որ ինքն պատուական մարդ է և ազնիւ հասարակականական:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Ժէնէվայում հաւաքվեցաւ Էյէրմի խնդրի առիթով կազմված միջնորդ դատարանը: Յունիսի 13-ին (25) նա ունեցաւ նիստ: Վիճաբանութիւնները և վճիռները դադարին ևս պահվում:

— Իսպանիայի լրագրիւնը հաղորդում են, որ հասարակականութեան կուսակցութիւնը մի չղաքերական հրատարակից, որտեղ նա յայտնում է թէ երբէք չէ հրաժարվել իր ուղղութիւնից: Թուրքի վերջնական և յետագայ խօսքերով, «մենք հաստատում ենք որ հասարակականութեան իրաւորութիւնը մօտենում է»: Ստորագրեցին Կաստէլար, Պի-ի-Մարգալ, Կոնստէնտին և այլն:

— Լրագրիւնը հաղորդում են, որ Էյզաուտ, չնայելով զանազան փոփոխութիւնների կառավարութեան մէջ, երդուեալ դատաստանը (պրիսեպտիւն սուր) իր հին կազմակերպութեամբ պահպանվում է: Ասում են որ Էյնպիւով տիրող կրքերին նա իր պաշտօնը անաչար կերպով կատարում է: Այդ պատճառով Շ. Ս. Բէք, ասում է թէ սխալվում են նոքա, որոնք կարծում են որ, մի նոր նուաճած կրկրում երդուեալ դատաստանը իրաւորութիւն չէ:

— Ֆրանսիական Journal des debats լրագրիւնը իր առաջնորդը յօդակն է մէջ, խօսելով Աւստրիայի կայսրի դիտաւորութեան վերայ Բէրլինի մէջ այցելութիւն անելու, ասում է որ Աւստրիայի, Գերմանիայի և Իտալիայի մէջ բարեկամութիւնը կարող է Եւրոպայի համար խաղաղութեան գրաւական լինել:

— Allgemeine Zeitung լրագրիւնը ասում է, որ Բէրլինի պատգամաւորները ժողովում առաջարկվեցաւ, որ եղութիւնը կայքը տէրութիւն սեպհականացին իրան, և անսխալակամութեան վարդապետութեան տարածողները պատժվին 10 տարվայ բանդարկութեամբ: Այդ առաջարկութիւնը չընդունվեցաւ: Ինքն Բիւմարկը ասեց որ տէրութիւնը եզուականների գործերը կարող է հաւածել, բայց գործ չունի կաթօլիկ եկեղեցու մի վարդապետութեան հետ:

— «Մասիս» լրագրի ստացած համարներում կարդում ենք, «այս չարթու սեղանաւորական նոր ընկերութեան մայ հաստատուեցաւ մայրաքաղաքի մէջ յոյն սեղանաւորաց ձեռք, Պանք տը Բոնոմանթիւնը անուամբ և մէկ միլիոն անդղական լիւրա դրամադիւրով, 100,000 բաժնի վերայ իւրաքանչիւր բաժնի 10 լիւրային: Հինգշաբթի օրը բաժանորդագրութիւնը բացուելով, առաջարկեալ 30,000 բաժնից փոխարէն երկու միլիոնէն ավելի բաժնիք ստորագրուեցան, որ արդարեւ նմանը չը տեսնուած յաջողութիւն մէ»:

— «Մասիս» լրագրիւնը պատմում է «Պրուսիայի և Իսմիտի դաւառաց մէջ չերամն այս տարի ալ չը յաջողվում, չերամագործք, որոց մեծ մասը հայ են, դարձեալ ծանրագէտ փնտնեցան»:

ՄԱՏՆԵԱԳՐՈՒԹԻՒՆ

Առաջնորդ քաղաքի մէջ հրատարակվել «Das Ausland» շաբաթաթերթի 8 ապրիլի 1872 թ. համարում կարդում ենք պ. Ա. Գ. Մորգանից սպած մի փոքրիկ պատմական պ. Պատկանեանի «Գանի մի խօսք հին հայոց ամիսների վերաբերութեամբ» զրկածքի մասին:

Պ. Մորգանը, յիշելով, որ նոյն ինքն զրկածքը նա չէ տեսել, իսկ իմացել է նորա մասին պ. պրոֆ. Իուստի (Insti) սպած «Հայոց հնագոյն պատմութեան վերա» վերագրած յօդուածից (Ausland, 5 փետր. 1872), յայտնում է, որ անհիմն է պ. Պատկանեանից իրաւ զէմ ցոյց տուած կասկածը, իբր թէ նորանից բերած օրինակները (հայոց բաւերը) հայոց լեզուի մէջ տուրանական խօսքերի ներկայութիւնը ապացուցանելու համար, ոչ թէ հին հայերէնից են քաղած, այլ միայն նոր են մըտել հայոց լեզուի գործածութեան մէջ տաճկաց լեզուի ազդեցութեամբ: Իր խօսքերի ճշմարտութիւնը վերստին ապացուցանելու համար, պ. Մորգանը իրանից բերած 24 բաւերը որոնել է և զըտել Աւստարանի մէջ (որը թարգմանվեցաւ, ինչպէս յայտնի է ՎԻ դարի վերջերին կամ Վ դարի սկզբին, երբ դեռ ևս Սելճուկների մասին խօսք էլ չը կար անգամ), յիշելով որ բացի սուրբ զրեկց այս բաւերը գտնվում են ևս այն ժամանակի (I A և V դարի) հայոց զանազան մատենադրոհների մէջ:

Պ. Մորգանն աւելացնում է, որ նա ինքն էլ քաջ զիտէ, որ հայոց լեզուն հնդկադարմանական լեզուներից է պատկանում, և որ նորա նպատակն էր միայն ցոյց տալ, թէ դրան չը նայելով այս լեզուն ի հնուց տուրանական տարրեր ևս իր մէջ ընդունել է:

Պ. Մորգանն ասում է, որ նա ստիպեցաւ այդ պատասխանը տպելու, որովհետեւ պ. Պատկանեանը յայտնում է, իբր թէ, նորա հետազոտութիւնները աւերեն ևս և ոչ բաւական վստահալի ու հիմնաւոր:

Անդրէաս Արծրունի

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Արարատ» ամսագրի մայիսի տետրակը ստացվեցաւ: Պատմական մասումը յետագայ նիւթեր ենք գտնում: Տեղագրութիւն Շիրակայ, — Հնու-թիւնը հայրենաց, — Կովկասեան բնակիչք, — Հայաստանի նախին յիշատակարանք, — Թէ ինչպէս կազմվեցաւ Հայոց ազգը:

Այն հանքերում, որտեղ բովադրվում է արծաթ և ոսկի, մշակները ամին բոպէ այդ թանգազին նիւթերը ձեռքումն ունենալով, այդ բովադրութեամբ հասարակութիւնը հարստացնելով, արտաւանդներ իրանք չեն հարստանում և միշտ աղքատ ու անպայմանում: Արցախում են ևս համատ մտաւոր աշխատողները: Նոքա անբող մի հասարակութիւնը հարստացնում են, կրթելով և պատրաստելով նոր սերունդը, իսկ իրանք միշտ անպայման են մնում: Այդպիսի անպայման և համատ մտաւոր աշխատողներից մէկը նորերում վախճանվել է Թիֆլիսում: Տիֆլին Տէր-Յովհաննիսեանը ունէր հայ ազնկարանց մի փոքրիկ ուսումնարան:

Պ. Սաէֆանէի տեսլութեան ժամանակ նա վարժուէի է եղել Ս. Մարիամեան ուսումնարանում: Նա իր աշխատանքով իր ամբողջ ընտանիքին էր պահում: Յունիսի 22 ին, նորա թաղման հանդէսին ներկայ էին գտնվում երկու ուսումնարաններ, նորա և Մարիամեան ուսումնարանը, նորա հին աշակերտութիւնը...:

Մեր լրագրի աշխատակիցներից միւր նորերում գիշերվայ ժամը 12-ին անցնում էր Թիֆլիսի սօլ-դատուի բազար անուանված փողոցում, — յանկարծ նորա վերա թափվում են երկու մարդ, երեկ թաղանկու նպատակով, կանչում են ստօի (կանգնիր) և արգելում են նորան ճանապարհը... Ղուրումազ, ասում է մեր բարեկամը, դուք էլ վախտ իք գտի թաղանկու, դուքիցը չէր բաց լին... ու հանդիստ կերպով երկու մարդիկների միջով անցնում է և իր ճանապարհը շարունակում: — Գողերը չիղթված մնացին:

Պ. Անդրէաս Արծրունու Գերմանիայից ստացած համակիր քաղում ենք հետեւեալը, «լսում եմ որ Կարլսրուէ քաղաքի մէջ մինչև այսօր դրանված երկրագործական ուսումնարանը տեղափոխվելու է Հէյդելբերգ և որ քիմիայի պրոֆէսոր պ. Կոպպը Հէյդելբերգում իր համար հրաման է առել Բադէնի նախարարութեանց այս նոր ուսումնարանի նախագիծը մշակելու:

Նոյն մասնաւոր նամակից տեղեկանում ենք երեք երեկու ուսումնականների մահվան մասին: «Նորերում վախճանել են, Բէլգիացի գիտնական Լը Հօն (Le Hon) Գերմանիայի նշանաւոր բուսաբան Հոմօ ֆօն Մօլ (von Mohl) և ամերիկացի Մօրզէ (Morse), որը հարել է այժմ ընդհանրապէս գործածական հնագրական մեքենան»:

Մեր քաղաքում անցան այս օրերս մի քանի ամերիկացի միսիօնէրներ (քաղաքիցները) ուղևորվելով դէպի Պարսկաստանի Ուրմիա քաղաքը, որ նոցա մշտական բնակութեան և գործունէութեան տեղն է: Պատմում են որ Երևանի գաւառում ճանապարհորդելով, նոքա կանգնեցան մի հայոց գիւղի մէջ, որի բնակիչները դիմեցին նոցա յայտնելով իրանց ցանկութիւնը կրօնափոխ լինելու, (բողոքականութիւնը ընդունելու): Ինչ հարկաւոր է կրօնափոխ լինել, պատասխանեցին միսիօնէրները, դուք քրիստոնէս էք, այդ բաւական է, ինչ հարկաւոր է իր վերա այս ինչ կամ այն ինչ դաւանութեան անունը կրելու, լուսեղական, լուսաւորչական և այլն, — հարկաւոր է այդ անունները ու դաւանութիւնները թողնել, և միայն քրիստոնէս եւ լինել, պահպանելով մի և նոյն ժամանակ իր ազգութիւնը»:

Ստացած «Մասիս լրագրի համարների մէջ կարդում ենք որ Կ. Պօլի Լէվընթ Հէրլը» անդղական լրագրիւնը բարձրագոյն հրամանով երեք ամիս ժամանակով դադարեցաւ:

Նոյն լրագրի էջերում գտնում ենք յետագայ նկատողութիւնը: «Գոհութեամբ կը ծանուցանեմ թէ Մանգուէ լրագրին դադարման պայմանաժամն երեկ աւարտած լինելով, այսօր նորէն հրատարակել սկսաւ: Օրագիր ալ երկուշաբթի օրը պիտի հրատարակի»:

Մեկ տեղեկացում են Գերմանիայից որ դարձեալ մի հայ երիտասարդ Գերմանական համալսարանի մէջ հարցաքննութիւն տալուց յետոյ, ըստացաւ գիտնական աստիճանը: Պ. Արզար Գովհաննիսեանը, որը Լէյպցիգում քաղաքական տնտեսութեամբ էր պարագում, նորերում ստացաւ դոկտորի աստիճանը:

ԹԻՖԼԻՉԻ ՓՕՍՏԸ

Ռուսաստան, Արտասահման ամեն օր ԵՐԿՈՒՇԱՐԹԻ. Բուլբայի, Դարբանդ և Երևանի գաւառը: ԵՐԵՎԱՆԻ. Բազու, Գանջա, Շուշի, Շամախի: ԶՈՐԵՔՇԱՐԹԻ. Բուլբայի, Երևան, Ախալցխա Դարբանդ: ՀԻՆԳՇԱՐԹԻ. Բուլբայի, Երևան, Ախալցխա ՈՒՐԱՐԱՐ. Բուլբայի, Երևան, Ախալցխա Զաքարթալ, Նուխի: ՇԱՐԱՐ. Բազու, Դարբանդ, Գանջա:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՉԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(յունիսի 28-ին)

ՈՍԿԻՆ, (պօրովմուկերիւ)	6	8
ՓՈԽԱՆԱԿԱԳՐ (բարաթ) Պօլս.		
վճարելիք (լիւրա Օսմանեան)	6	70
ԲԱՄԲԱԿԻ Երևանու...	5	20
Ամերիկայի սերմից.	6	10
ԹԱՐԱՔՈՒ Տրապիզոնի անդր.	12	—
ՇԱՔԱՐԸ Ռսի (Բրոցկու)...	8	45
« միւս տեսակը...	8	15
« զաղարկից տրանցիլ.	5	75
մաքուր վճարած...	8	85
ՇԱՔԱՐԱՄԱՋԸ Ռսի...	7	90
ԲՈՒՐԻՐ Թուլի...	9	—
« Թարեքամի...	7	50
ՂԱՎԱՍ Լիվանի լաւ...	13	50
« Մարտիկիլից, ցածրը...	12	—
« Մօկո, շատ լաւ...	14	50
ՊՂՊԵՂԸ...	11	50
ԵՐԿԱՐ...	2	20
մինչև...	3	50
ՄՈՍ...	12	—

ԱԼԻԻՐԸ կրուպչակայ Ռուսաստանի բերքը փութը...	3	60
ԱԼԻԻՐԸ կրուպչակայ Ախալցիկանի տեղական վաղացից (Գեանջայում)...	№ 1 փութ	3 20
«	№ 2	2 40
«	№ 3	2 10
ԱԼԻԻՐԸ Գեանջու հասարակ...	1	50
« Շորագալու...	1	35

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(յունիսի 17-ին)

ԼՕՆԴՈՆ.—մի ուրբի ածէ 32% պէնս (փոխանակ 40 պէնս):	
ՓԱՐԻՋ.—մի ուրբի ածէ 347% սամուր (փոխանակ 400 սամուր):	
Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ	155
Երկրորդ	153

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅՍ ՕՐԵՐՍ

Լոյս տեսաւ Թիֆլիզում մի փոքրիկ գրքոյկ հետեւեալ վերնագրով. Պատուաստման կամ ծաղիկ կտրելու նշանակութիւնը քաղուած գերմաներէնից: Աշխատասիրութիւն Նիկողայոսի Լալայեանց:

Ծախվում է. Վարդանովի և Ալաղաթեանի գրավաճառանոցներում:

Կլասիկական գիմնազիայի 7-րդ դասատան մի աշակերտ յանձն է առնում պատրաստել երեխայոց երկու գիմնազիոնի առաջին չորս դասատանց համար, և տալիս է նոյնպէս սուանձին դասեր:

Հարցնել պ. Աւետիք Էնֆիա ճեանի և Լաղաթեանի գրավաճառանոցներում: